ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

00010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/45571-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (ԽՍ-266-02.09.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1340 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան
Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-ԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-266-02.09.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱ-ՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է քննչական բաժնի պետին ներառել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածում՝ որպես առանձին դատավարական կարգավիճակ ունեցող սուբյեկտ, ում որոշումների, գործո-ղությունների կամ անգործության դեմ կարող են բողոքներ ներկայացվել դատարան կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի գործող հոդվածը թողնել անփոփոխ՝ հետևյալ հիմնավորմամբ.

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածում սահմանված են քննչական բաժնի պետի լիազորությունները, որոնք ըստ բնույթի դասակարգվում են կազմակերպահրավական և դատավարական լիազորությունների: Այսպես, քննչական բաժնի պետի կազմակերպահրավական լիազորությունները թվարկված են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասում. դրանք են՝

1) նախաքննության կատարումը հանձնարարում է իրեն ենթակա քննիչին, գործն իրեն ենթակա մի քննիչից հանձնում է մյուսին.

2) հետևում է իրեն անմիջականորեն ենթակա քննիչների կողմից իրենց վարույթում գտնվող քրեական գործերով քննչական գործողությունները ժամանակին կատարելու, նախաքննության և կալանքի տակ պահելու ժամկետները պահպանելու, դատախազի ցուցումները և այլ քննիչների հանձնարարությունները կատարելու նկատմամբ.

3) իրեն անմիջականորեն ենթակա քննիչներին ցուցումներ է տալիս իրենց վարույթում գտնվող քրեական գործերով առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ.

4) նախաքննության կատարումը հանձնարարում է իրեն ենթակա մի քանի քննիչի:

Նշված լիազորությունների բովանդակությունից հետևում է, որ դրանք ներքին աշխատանքային բնույթ են կրում և չեն դասվում դատական կարգով բողոքարկման ենթակա որոշումների շարքին:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված են քննչական բաժնի պետի դատավարական լիազորությունները: Այսպես, նշված հոդվածի համաձայն քննչական բաժնի պետն իրավունք ունի մասնակցելու իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում գտնվող քրեական գործով նախաքննության կատարմանը, անձամբ կատարելու նախաքննությունը՝ օգտվելով քննիչի լիազորություններից: Այսինքն, նշված քրեադատավարական կարգավորումներից հետևում է, որ քննչական բաժնի պետը քրեական վարույթի շրջանակներում կարող է հանդես գալ որպես քննիչ: Հետևաբար, քննչական բաժնի պետը դատական կարգով բողոքարկման ենթակա որոշումներ ընդունելիս կամ գործողություններ կատարելիս ունի քննիչի կարգավիճակ, որը ձեռք է բերում՝ քրեական գործն իր վարույթ ընդունելով:

Հարկ է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածում խոսքը գնում է այնպիսի որոշումների և գործողությունների մասին, որոնք ոչ թե կազմակերպահրավական, այլ դատավարական բնույթ են կրում: Այդ նկատառումներից ելնելով՝ օրենսդիրը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածում համապատասխան սուբյեկտների շարքում չի ներառել քննչական բաժնի պետին, քանի որ, ինչպես արդեն նշել էինք, նախաքննություն կատարելիս քննչական բաժնի պետը հանդես է գալիս որպես քննիչ:

Ամփոփելով նշվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախագծի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2019 թվականի N 1340 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Աննա Վարդապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-266-02.09.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 20
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

ԽՍ-266-02.09.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության 1998 թվականի հուլիսի 01-ի օրենսգրքի 290-րդ հոդվածի վերնագիրը «քննիչի,» բառից հետո լրացնել «քննչական բաժնի պետի,» բառերով:

2. Նույն հոդվածի 1-ին մասը «քննիչի,» բառից հետո լրացնել «քննչական բաժնի պետի,» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ու Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն օրենսգրքի (այսուհետ՝ «Օրենս-գիրք) 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների եւ գործողությունների օրինական եւ հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ ան-ձանց կողմից, որոնց իրավունքները եւ օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով եւ գործողություններով, եւ եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից: Այստեղից դուրս է մնացել քննչական բաժնի պետի կողմից կայացված որոշումների եւ գոր-ծողությունների բողոքարկման հնարավորությունը, քանի որ, համաձայն Օրենսգրքի 6-րդ հոդվածի 26-րդ կետի՝ վերջինս դիտվում է առանձին դատավարական կարգավիճակ ունեցող սուբյեկտ:

Օրենսգրքում լրացում կատարելու անհրաժեշտությունը հիմնականում պայմանավորված է երկու հանգամանքներով՝

- Դատավարության մասնակիցների կողմից քննչական բաժնի պետի որոշումները եւ ան-օրինական գործողությունները վիճարկելու հնարավորության նախատեսում, քանի որ այդպիսիք կարող են խախտել այդ սուբյեկտների իրավունքները,
- Մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունն ու դատական վերահսկողությունն առավել արդյունավետ իրականցնելու հնարավորության ապա-հովում:

Այսպիսով, ներկայացված նախագծի ընդունմամբ՝ քննչական բաժնի պետի որոշումների եւ գործողությունների օրինական եւ հիմնավոր չլինելու դեմ կարող են բերվել բողոքներ դատարան՝ կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության

մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները եւ օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով եւ գործողություններով, եւ եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից: